



Global Compact Network
Armenia

ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի Հայաստանյան Ցանց

Կառավարման սկզբունքներ

Հաստատված է ԳՊ Հայաստանյան ցանցի Ընդհանուր Ժողովով

30 Հունիսի, 2009

Բովանդակություն

| | |
|---|-----------|
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ | 2 |
| ՄԱԿ-ի ԳԼՈՒԿԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՑԱՆՑ | 2 |
| ՑԱՆՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ | 2 |
| ՑԱՆՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ | 2 |
| ՑԱՆՑԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ | 2 |
| ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ | 3 |
| ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ | 4 |
| ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ | 4 |
| ԱՆԴԱՍՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ | 4 |
| ԱՆԴԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 4 |
| ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ և ՎԵՃԵՐ | 5 |
| ԿԱՌԱՎԱՐՈՒՄ | 6 |
| ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ | 6 |
| ԱՆԴԱՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ | 6 |
| ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԸ | 7 |
| ՑԱՆՑԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ | 9 |
| ՀԱՆՐԱՑԻՆ ԿԱՊԵՐ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 11 |
| ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ | 12 |
| ՑԱՆՑԻ ԼՈՒՇԱՐՈՒՄԸ | 12 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԵՐ և ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ | 13 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՄԱԿ ԳՊ ՏԱՍ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ | 15 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ և ՏԵՐՄԻՆՆԵՐ | 16 |



Ընդհանուր Դրույթներ

ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի Հայաստանյան Ցանց

ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի Հայաստանյան Ցանցը (այսուհետև Ցանց) դա ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագիր (ԳՊ) նախաձեռնության մասնակից Հայաստանյան բիզնեսների և ոչ առևտրային կազմակերպությունների գործընկերային կառույց է: Այս կազմակերպությունները միավորել են իրենց ջանքերը ԳՊ հայեցակարգը և սկզբունքները ջատագովելու, ինչպես նաև տարբեր շահագրգիռ կողմերին ներգրավելու և համատեղ աշխատանքի հնարավորություններ ստեղծելու համար:

Ցանցի տեսլականը

Ցանցի տեսլականը դա կայուն և զարգացած Հայաստանն է, որտեղ յուրաքանչյուր անհատ ունի քաղաքակիրթ ապրելակերպ, որտեղ կոռուպցիոն ռիսկերը նվազագույնն են, աշխատանքային և մարդու հիմնարար իրավունքները հարգված են, բիզնեսներն ունեն սոցիալապես պատասխանատու վարքագիծ, և շրջակա միջավայրի պաշտպանությունը յուրաքանչյուրի պատասխանատվությունն է:

Ցանցի Առաքելությունը

Ցանցի առաքելությունն է ապագա սերունդների համար Հայաստանը դարձնել լավ ապրելավայր՝ սոցիալապես պատասխանատու բիզնես մոդելը և պրակտիկան խրախուսելու, ինչպես նաև բիզնեսի համագործակցության հնարավորություններ ստեղծելու միջոցով: ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի Հայաստանյան Ցանցը աշխատում է կրճատել աղքատությունը և նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, ստեղծել համագործակցության հնարավորություններ, բարելավել մարդու իրավունքները և աշխատանքային ստանդարտները Հայաստանում:

Ցանցի Արժեքները

Ցանցի անդամները պարտավորվում են աշխատել մասնակցային և թափանցիկ ձևով՝ հետևելով Ցանցի առաքելությանն ու տեսլականին:

Ցանցի բոլոր անդամները հարգում են միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքները և միավորումներ ստեղծելու և անդամակցելու իրավունքները:

Ցանցի բոլոր անդամները ջատագովում են կայուն զարգացմանն և աղքատության կրճատմանն ուղղված բիզնես համագործակցությունը: Համագործակցությունը և խմբային աշխատանքը Ցանցի հիմնաքարերն են:

Ներկայացուցչությունն ու բազմազանությունը Ցանցի համար կարևոր արժեքներ են: Տարբեր ոչ առևտրային խմբեր ներգրավելով՝ Ցանցը փորձում է հասարակության տարբեր խմբեր ներառել և Գլոբալ Պայմանագիրը դարձնել իրականում հասարակական նախաձեռնություն:

Նպատակներն ու խնդիրները

Ցանցի երկարաժամկետ նպատակներն ու խնդիրներն են.

1. Գործել որպես Կորպորատիվ Սոցիալական Պատասխանատվության ուսման և փորձի կառուցողական փոխանակման ազգային ֆորում: Ցանցը խրախուսելու է իր անդամներին պատրաստել և տարածել հաջողված փորձի ուսումնասիրություններ, աջակցելու է գործընկերների ուսուցմանը ազգային և տեղական առաջնահերթություններին համահունչ պատասխանատու բիզնես պրակտիկային ուղղված տարբեր միջոցառումներ կազմակերպելով, ինչպես նաև քննարկումների և ֆորումների հնարավորություններ ստեղծելով:
2. Ցանցը կխրախուսի և կաջակցի իր անդամներին պլանավորել համատեղ նախաձեռնություններ և իրականացնել համատեղ ծրագրեր ուղղված Ցանցի առաքելական նպատակների նվաճմանը:
3. Նոր անդամների ակտիվ հավաքագրման ռազմավարության իրականացման միջոցով Ցանցը կգործի որպես ԳՊ հանրայնացման մեխանիզմ Հայաստանում:
4. Նպատակ ունենալով ստեղծել հայկական բիզնեսների գործունեության համար արդյունավետ միջավայր՝ Ցանցը կվերհանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության, մարդու իրավունքների, աշխատանքային ստանդարտների, կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու բիզնեսի հետ կապված հրատապ հարցերը և կներգրավի շահագրգիռ կողմերին քաղաքական երկխոսության մեջ:
5. Ցանցը կօգնի ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի մասնակից հայաստանյան ընկերություններին իրականացնել ԳՊ տասը սկզբունքները և պատրաստել Առաջընթացի մասին Հաղորդակցություն (Communication on Progress) տարեկան հաշվետվությունը:
6. Գործել որպես ԳՊ տասը սկզբունքներին, պատասխանատու կորպորատիվ քաղաքացիությանը և ՄԱԿ-ի Հազարամյակի Զարգացման Նպատակներին առընչվող խնդիրների համար երկխոսության և հանրային քննարկումների ազգային պլատֆորմ:
7. Կազմակերպությունների հակասական վարքագծի դեպքում Ցանցը կարող է հանդես գալ որպես միջնորդ՝ ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի ազնվության չափանիշների համատեքստում:



Անդամությունը

Անդամությունը

Ցանցին կարող են անդամակցել բոլոր այն կազմակերպությունները (առևտրային և ոչ առևտրային), որոնք գրանցված և գործում են Հայաստանում և մասնակցում են ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրին:

Այլ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները կարող են միանալ Ցանցին, սակայն միանալիս անհրաժեշտ է գրանցվել որպես ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի մասնակից:

Անդամակցության վճար կարող է սահմանվել միայն Անդամների Ընդհանուր Ժողովի կողմից:

Անդամակցության ընթացակարգը

Երբ կազմակերպությունը լրացնում է Գլոբալ Պայմանագրի նախաձեռնությանը մասնակցելու ձևաթերթիկը, ինքնաբերաբար նա դառնում է տեղական Ցանցի անդամ: Ցանցի անդամության առանձին հայտաձև չի պահանջվում:

ԳՊ նոր մասնակցի անունը տվյալների բազայում հայտնվելուն պես, Ցանցի Քարտուղարությունը (բացակայության դեպքում Պատասխանատու անձը) տեղյակ է պահում Ցանցի անդամներին նոր անդամների անդամակցության մասին:

Անդամության դադարեցումը

Յուրաքանչյուր անդամ կարող է ցանկացած ժամանակ որոշել հրաժարվել Ցանցի անդամությունից: Դրա համար անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել Ցանցի Քարտուղարությանը (բացակայության դեպքում Պատասխանատու անձին):

Եթե կազմակերպությունը հեռացվել է ԳՊ մասնակիցների ցանկից, ավտոմատ կերպով դադարեցվում է տվյալ կազմակերպության անդամակցությունը Ցանցին:

Անդամների իրավունքներն ու պարտականությունները

Ցանցի յուրաքանչյուր անդամ կազմակերպություն իրավունք ունի.

1. Մասնակցել Ցանցի Անդամների Ընդհանուր Ժողովին՝ մեկ կազմակերպությունը մեկ ձայն սկզբունքով:
2. Ընտրել և ընտրվել Ցանցի Կառավարման մարմիններում:
3. Ներկայացնել համատեղ ծրագրեր և ներկայացված լինել Ցանցի մյուս անդամների ծրագրերում:

4. Մասնակցել Ցանցի դասընթացներին և այլ միջոցառումներին ՀԽ-ի սահմանած ընթացակարգերին համապատասխան:
5. Ցանցի Քարտուղարությունից աջակցություն ստանալ Առաջընթացի մասին հաղորդակցություն հաշվետվությունը նախապատրաստելիս:
6. Առաջարկել փոփոխություններ Ցանցի Կառավարման Սկզբունքներում՝ համաձայն սույն փաստաթղթում սահմանված ընթացակարգերի:
7. Դուրս գալ Ցանցից ցանկացած ժամանակ:

Ցանցի յուրաքանչյուր անդամ պարտավոր է.

1. Հարգել մյուս անդամների իրավունքները և Ցանցի Կառավարման Սկզբունքները:
2. Հետևել ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի տասը սկզբունքներին և պատրաստել տարեկան Առաջընթացի մասին հաղորդակցություն հաշվետվությունը:
3. Վճարել Ցանցի Ընդհանուր Ժողովի կողմից սահմանված անդամակցության վճարները, եթե այդպիսիք կան:
4. Չձեռնարկել գործողություններ, որոնք հակառակ են ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի և Ցանցի հիմնական սկզբունքներին:

Բողոքարկում և վեճեր

Ցանցի խնդիրներից մեկը, որպես միջնորդ հանդես գալն է այն դեպքերում, երբ ընկերության հակասական վարքագիծը չի համապատասխանում ԳՊ ազնվության չափանիշներին: Եթե այսպիսի դեպք է լինում, Համակարգող խորհուրդն իր անդամներից ձևավորում է ժամանակավոր հանձնաժողով, որը կգրադվի տվյալ խնդրով:

Եթե կողմերից մեկը բավարարված չէ ընդունած որոշմամբ, նա կարող է հարցը բարձրացնել անդամների Ընդհանուր Ժողովում: Ընդհանուր Ժողովի որոշումները վերջնական են:



Կառավարում

Ցանցի կառուցվածքը

Ցանցը ունի ֆորմալ կազմակերպական կառուցվածք: Կառավարման ամենաբարձր օղակը դա Անդամների Ընդհանուր Ժողովն է, որը գումարում է իր հերթական ժողովները տարեկան առնվազն մեկ անգամ: Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում կառավարումն իրականացվում է Ցանցի Համակարգող խորհրդի կողմից, որին ընտրում է Ընդհանուր Ժողովը: Եթե կան ռեսուրսներ, Համակարգող խորհուրդը կարող է ստեղծել Քարտուղարություն իր աշխատակազմով և գրասենյակով՝ Ցանցին ամենօրյա աջակցություն տրամադրելու համար: Հակառակ դեպքում Ցանցը կնշանակի Պատասխանատու անձ, որը կգործի որպես Ցանցի Քարտուղարություն:

Այլ ժամանակավոր աշխատանքային խմբերը կամ հանձնաժողովները կարող են ստեղծվել Համակարգող խորհրդի կողմից՝ հատուկ հարցերի շուրջ աշխատելու նպատակով:

Ցանցի կառավարման կառուցվածքի նպատակն է պաշտպանել և ջատագովել “Գլոբալ Պայմանագիր” անվանումը, բարձրացնել ընդգրկվածության որակը և հասնել առավելագույն դրական արդյունքի Հայաստանում:

Ցանցի գործողությունները իրականացվում են Անդամների կամավոր ներդրումների միջոցով: Տեղական, ազգային և միջազգային դրամաշնորհառուների ներդրումները նույնպես խրախուսվում են:

Ցանցի կառավարման կառուցվածքը ներդրվել է ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի հայաստանյան մասնակիցների և այլ շահագրգիռ կողմերի դերը այս նախաձեռնությունում բարձրացնելու, ինչպես նաև մեկ տրամաբանական կառույցի մեջ հավաքելու կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանն ուղղված գործողությունները՝ հասնելու ավելի մեծ հասարակություն-բիզնես համագործակցության և շոշափելի արդյունքների:

Անդամների Ընդհանուր Ժողովը

Անդամների Ընդհանուր Ժողովը Ցանցի կառավարման բարձրագույն մարմինն է:

Իրավունքները

Ընդհանուր Ժողովը կազմված է Ցանցի բոլոր անդամ կազմակերպություններից:

Ընդհանուր Ժողովը.

- սահմանում է ցանցի ռազմավարական ուղղությունները և հաստատում է Կառավարման Սկզբունքները և դրա փոփոխությունները:
- Իր անդամներից ընտրում է Ցանցի Համակարգող խորհուրդ՝ մեկ տարի ժամանակով:
- Կարող է որոշում կայացնել Անդամներից անդամավճարներ հավաքելու մասին:
- Կարող է որոշում կայացնել լուծարել Ցանցը:

Հանդիպումները

Ընդհանուր Ժողովի հերթական հանդիպումները տեղի են ունենում տարին մեկ անգամ: Ընդհանուր Ժողովի հանդիպումից առնվազն երկու շաբաթ առաջ Քարտուղարությունը պետք է հրավեր ուղարկի Ցանցի բոլոր անդամներին և տեղեկատվությունը տեղադրի Ցանցի վեբ կայքում:

Արտահերթ ժողով կարող է նշանակվել բոլոր անդամների մեկ երրորդի կամ Համակարգող խորհրդի խնդրանքով: Նման դեպքում ժողովի օրակարգը և հրավերները ուղարկվում են Անդամներին առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

Ընդհանուր Ժողովը կարող է կազմակերպվել հեռակա կարգով (ինտերնետով կամ հաղորդակցության այլ միջոցներով): Նման դեպքում Անդամների հիսուն տոկոսի քվեարկությունը պարտադիր է որոշման կայացման համար:

Որոշումների ընդունումը

Ընդհանուր Ժողովի ժամանակ յուրաքանչյուր անդամ կազմակերպություն ունենում է մեկ քվեի իրավունք: Ընդհանուր Ժողովի ժամանակ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ է անդամների առնվազն հիսուն տոկոսի քվեները: Ընդհանուր Ժողովում որոշումները կայացվում են բաց և թափանցիկ ընտրություններում:

Կառավարման Սկզբունքներում փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ է ձայների 75 տոկոսը:

Ցանցի լուծարման որոշումը կայացվում է միաձայն քվեարկությամբ:

Համակարգող Խորհուրդը

Կազմը

Ցանցի Համակարգող խորհուրդը (ՀԽ) հիմնական կառավարման մարմինն է Ընդհանուր Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում: Համակարգող

խորհուրդն ընտրվում է մեկ տարի ժամկետով: Ցանցի յուրաքանչյուր անդամ կարող է դառնալ Համակարգող խորհրդի անդամ անսահմանափակ անգամ:

ՀԽ անդամների քանակը որոշվում է Ընդհանուր ժողովի կողմից: Եթե Ցանցի անդամների թիվը հարյուրից քիչ է, ապա Համակարգող խորհրդի անդամների թիվը չպետք է լինի յոթից ավել կամ հինգից պակաս: Եթե Ցանցի անդամների թիվը հարյուրից անցնում է, ապա Համակարգող խորհրդի անդամների առավելագույն թիվը կարող է լինել մինչև ինը անդամ: Ցանցի Պատասխանատու անձը և Քարտուղարության համակարգողը մասնակցում են ՀԽ ժողովներին՝ խորհրդատվական ձայնի իրավունքով:

ՀԽ առնվազն կեսը պետք է լինեն բիզնես ընկերությունների ներկայացուցիչներ:

ՀԽ իր անդամներից ընտրում է Խորհրդի Նախագահ իր գործունեության ժամանակահատվածի համար: ՀԽ Նախագահը պատասխանատու է ՀԽ-ի աշխատանքները կազմակերպելու և Քարտուղարության աշխատանքները համակարգելու համար: ՀԽ Նախագահը գործում է որպես տեղական Ցանցի պաշտոնական ներկայացուցիչ՝ հասարակության և կառավարմանը վերաբերվող հարցերում, ինչպես նաև ստորագրում է Ցանցի Փոխըմբռնման Հուշագիր ԳՊ գրասենյակի հետ:

Գործառույթները

Ցանցի ՀԽ գործառույթներն են.

1. Ներկայացնել ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի Հայաստանյան Ցանցը տեղական և միջազգային մակարդակներում:
2. Խրախուսել կառուցողական երկխոսություն ցանցի անդամների և շահառուների միջև:
3. Ներկայացնել երկարաժամկետ ռազմավարության նախագիծը Ընդհանուր Ժողովի քննարկմանը:
4. Ցանցի անդամներին տրամադրել հանրային քաղաքականության և ռազմավարական բնույթի խորհրդատվություն:
5. Ցանցի արդյունավետ գործունեության համար մշակել կարգեր և ընթացակարգեր (անդամների հավաքագրման, հանրային կապերի, ծրագրերի զարգացման, և այլն):
6. Հաստատել Ցանցի գործողությունների ծրագիրը և տարեկան հաշվետվությունները:
7. Առաջնորդել ցանցի ֆոնդահայթայթման ջանքերը:
8. Հիմնադրել Ցանցի Քարտուղարություն:
9. Իրականացնել ցանցի կատարողականի վերահսկում և գնահատում:

Ընտրություն

ՀԽ պաշտոնավարության ավարտից երկու ամիս առաջ պետք է սկսվի նոր ՀԽ ընտրությունների գործընթացը: Ցանցի Քարտուղարությունը պատասխանատու է ՀԽ ընտրությունները կազմակերպելու համար: Ընտրությունները կարող են անց կացվել էլեկտրոնային միջոցներով կամ անձնապես ներկայանալով:

Յուրաքանչյուր անդամ կազմակերպություն կարող է Ցանցի Անդամ կազմակերպություններից առաջադրել ՀԽ մեկ թեկնածու:

Թեկնածուների վերջնական ցուցակը (քվեաթերթիկը) տրամադրվում է բոլոր անդամներին: Յուրաքանչյուր անդամ կազմակերպություն կարող է քվեարկել մինչև յոթ թեկնածուի օգտին, բայց յուրաքանչյուրին կարող է տալ միայն մեկ ձայն:

Քվեաթերթիկը վերադարձնելու վերջնաժամկետը, ինքնաառաջադրման ձևաթուղթը և այլ տեխնիկական մանրամասները որոշում է ՀԽ-ը:

Որոշումների կայացումը

ՀԽ-ը կազմակերպում է իր աշխատանքները եռամսյակային ժողովների միջոցով: Ժողովները կարող են գումարվել ՀԽ հանդիպումների ձևով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով: Որոշում կայացնելու համար ՀԽ անդամների հիսուն տոկոսի քվեն պարտադիր է:

Ցանցի Քարտուղարությունը

Կազմը

Ցանցի Քարտուղարությունը նպաստում է Ցանցի գործողությունների իրականացմանը: Քարտուղարությունը Ցանցի գործադիր կառավարման մարմին է: Քարտուղարությունն է պատասխանատու Ցանցի ներքին և արտաքին հաղորդակցությունների համար:

Քարտուղարությունը ստեղծվում է ՀԽ որոշմամբ: Որոշումը պետք է ներառի առնվազն հետևյալը.

- Քարտուղարության կառուցվածքը,
- Քարտուղարության գործառույթները, բացի Կառավարման սկզբունքներում արդեն ներառվածներից,
- Գրասենյակի տեղակայությունը և հաղորդակցության միջոցները,
- Քարտուղարության պահպանման համար նախատեսված գումարը:

Գործառույթները

1. Իրականացնել ՀԽ կողմից հաստատված անդամների հավաքագրման քաղաքականությունը (ներառյալ նոր մասնակիցներին աջակցության նամակներ ուղարկելը և ԳՊ ինտերնետային կայքի տվյալների բազայում նոր մասնակիցների տվյալներն ավելացնելը):
2. ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի գրասենյակին տեղեկացված պահել Ցանցի միջոցառումների, տեղական ծրագրերի, ազգային նախաձեռնությունների կամ մշակված գործիքների մասին:
3. Ցանցի անդամներին շարունակաբար տեղեկացնել ՀԽ որոշումների մասին:
4. Աջակցել և խրախուսել Ցանցի անդամների միջև համագործակցությունը և համատեղ ծրագրերի իրականացումը:
5. Անդամներին օգնել “Առաջընթացի մասին հաղորդակցություն” հաշվետվությունը պատրաստելիս:
6. Հարաբերություններ պահել զանգվածային լրատվության միջոցների հետ՝ տեղական լսարանն ընդլայնելու և ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի նախաձեռնությունների մասին հանրության իրազեկությունը բարձրացնելու նպատակով:
7. Հայերեն թարգմանել ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի փաստաթղթերը, գործիքները, ուղեցույցներն և այլ կրթական նյութերը:
8. Կառավարել և պահպանել Ցանցի պաշտոնական վեբ կայքը (www.globalcompact.am):
9. Աջակցել ՀԽ և Ընդհանուր Ժողովի աշխատանքներին:

Քարտուղարության համակարգողը հանդես է գալիս է որպես Ցանցի Պատասխանատու անձ և գործում է որպես ԳՊ գրասենյակի և ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի այլ Ցանցերի հետ կապող օղակ:

Այն դեպքում, երբ առկա չէ Ցանցի կողմից ստեղծված առանձին Քարտուղարություն, Ընդհանուր Ժողովը առաջադրում է մեկ հոգու որպես Ցանցի Պատասխանատու անձ, որը միաժամանակ հանդես է գալիս որպես Ցանցի Քարտուղարություն:

Եթե Պատասխանատու անձը հրաժարվում է իր պաշտոնից կամ դառնում է անհասանելի մինչև հաջորդ Ընդհանուր Ժողովը, ՀԽ նշանակում է ժամանակավոր պաշտոնակատար մինչև հաջորդ Ընդհանուր Ժողովը:

Հանրային կապեր և Հաղորդակցություն

Տեղեկատվական հոսքեր

Ցանցի Քարտուղարությունն է պատասխանատու Ցանցի ներքին և արտաքին հաղորդակցության համար: Անդամների էլեկտրոնային հասցեների ներքին ցանկը պատրաստվում և թարմացվում է Քարտուղարության կողմից՝ անդամների միջև ներքին հաղորդակցությունը պահելու նպատակով:

Պաշտոնապես Ցանցի անունից հանդես գալու, պետական մարմինների և ՁԼՄ-ների առջև Ցանցը ներկայացնելու լիազորություն ունեն միայն ՀԽ անդամները և Ցանցի Պատասխանատու անձը, եթե ՀԽ կողմից այլ որոշում չի կայացվել:

Լոգոների օգտագործումը

Գոյություն ունեն չորս տիպի պատկերներ, որոնք ներկայացնում են ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի ու տեղական Ցանցերի ինքնությունը: Դրանք են՝ ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի լոգոն, լոգոտիպը, Աջակցողի լոգոն և տեղական Ցանցի լոգոտիպը: Առաջին երեքը նույնն են բոլոր երկրների համար և կարող են օգտագործվել համաձայն ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի լոգոյի օգտագործման քաղաքականության:

Ցանցի լոգոտիպը յուրահատուկ է տեղական Ցանցերի համար: Հայաստանյան ՄԱԿ-ի Գլոբալ Ցանցի լոգոտիպը ձախ կողմում ունի Գլոբալ Պայմանագրի լոգոն և աջ կողմում՝ Global Compact Network Armenia բառերը: Ցանցի լոգոտիպը կարող է օգտագործվել անդամ կազմակերպությունների կողմից, ՀԽ համաձայնությամբ և Գլոբալ Պայմանագրի լոգոյի քաղաքականությանը համահունչ:

Ցանցը կարող է ունենալ իր բլանկը Ցանցի լոգոտիպով՝ պաշտոնական հաղորդակցության համար:

Վեբ կայք

Ցանցի վեբ կայքը պատրաստվում և պահպանվում է Քարտուղարության կողմից՝ որպես արտաքին հաղորդակցման հիմնական մեխանիզմ:

Կայքը կարող է օգտագործվել նաև անդամների և ՀԽ վիրտուալ ժողովների համար, ինչպես նաև որպես ներքին քննարկման ֆորում և որոշումներ կայացնելու մեխանիզմ:

Գործընկերություն և համագործակցություն

Իր առաքելությունը իրականացնելու նպատակով Ցանցը տարվա ընթացքում մշակում և իրականացնում է տարբեր ծրագրեր: Ծրագրերը կարող են մշակվել և իրականացնել մեկ անդամի, մի խումբ անդամների կամ ՀԽ և Քարտուղարության նախաձեռնությամբ:

Յուրաքանչյուր անդամ կազմակերպություն, որը գործընկերներ է փնտրում կոնկրետ ծրագրի համար, կարող է դիմել Քարտուղարությանը այդ հայտարարությունը տարածելու և համատեղ նախաձեռնությանն աջակցելու համար:

Յուրաքանչյուր անդամ կազմակերպություն կարող է դիմել Քարտուղարությանը այլ անդամների անհատական կամ խմբային ծրագրերում մասնակցելու համար:

Ցանցը չունի առանձին բյուջե անդամների ծրագրերը ֆինանսավորելու համար: Այնուամենայնիվ, այն կարող է օգնություն ցուցաբերել ֆոնդահայթայթման և ծրագրերի մշակման ընթացքում՝ խորհրդատվությունների, տեղեկատվության տրամադրման, համատեղ նախաձեռնությունների խրախուսման և այլ միջոցներով:

Հաշվետվությունները և հաշվետվողականությունը

Յուրաքանչյուր տարի Ցանցը պետք է պատրաստի իր տարեկան գործողությունների հաշվետվությունը:

ՀԽ ներկայացնում է իր տարեկան հաշվետվությունները իր պաշտոնավարման ավարտին:

Ցանցի տարեկան հաշվետվությունները պետք է հասանելի լինեն հանրությանը վեբ կայքի կամ այլ միջոցներով:

Ցանցի լուծարումը

Ընդհանուր ժողովը կարող է միաձայն քվեարկությամբ դադարեցնել Ցանցի գործունեությունը:

Ցանցը գործում է, եթե ունի առնվազն երեք անդամ:



Հավելված 1: Ներքին կարգեր և ընթացակարգեր

Հաստատված է
Գլոբալ Պայմանագրի Հայաստանյան Ցանցի
Համակարգող Խորհրդի կողմից
Ամսաթիվ
Ստորագրություն
Համակարգող Խորհրդի նախագահ

ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի Հայաստանյան Ցանցի ներքին կարգեր և ընթացակարգեր

Առաջին Ընդհանուր Ժողովը

Առաջին Ընդհանուր Ժողովը կազմակերպում է ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով: Առաջին Ընդհանուր Ժողովի օրակարգը ներառում է Ցանցի Կառավարման սկզբունքների հաստատումը և ՀԽ քննարկումները:

Ցանցի Ռազմավարական պլանը

Ցանցի երկարաժամկետ Ռազմավարական պլանը նախագծվում է ՀԽ-ի կողմից և Քարտուղարության աջակցությամբ, որպեսզի ներկայացվի երկրորդ հերթական Ընդհանուր Ժողովի հաստատմանը:

Համակարգող Խորհրդի հանդիպումները

ՀԽ Նախագահը, Քարտուղարության աջակցությամբ կազմակերպում և վարում է Հանձնաժողովի հերթական եռամսյակային ժողովները: ՀԽ-ի արտահերթ ժողով կարող է հրավիրվել ՀԽ Նախագահի կամ առնվազն երեք ՀԽ անդամների նախաձեռնությամբ:

ՀԽ հանդիպումները կարող են կայանալ ՀԽ անդամներից մեկի գրասենյակում կամ Քարտուղարությունում:

Հերթական ժողովների օրակարգի նախագիծը ուղարկվում է ՀԽ անդամներին ժողովից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ: Արտահերթ ժողովի օրակարգը պատրաստվում է նախաձեռնողի կողմից և ուղարկվում է ՀԽ անդամներին ժողովից առնվազն 24 ժամ առաջ:



Բոլոր ժողովները արձանագրվում են և պահվում Քարտուղարությունում:

Քարտուղարություն

ՄԱԶԾ Հայաստանում գործող ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագիր ծրագիրը կգործի որպես Ցանցի Քարտուղարություն մինչև 2009թ-ի վերջը:

Քարտուղարությունը գտնվում է ՄԱԶԾ գրասենյակում և ունի երկու աշխատակից:

Տարեկան Հաշվետվություն

Ցանցի տարեկան հաշվետվության նախագիծը պետք է ներկայացվի ՀԽ հաստատմանը մինչև հաջորդ տարվա առաջին եռամսյակի վերջը: ՀԽ-ն է սահմանում հաշվետվության ձևաչափը: ՀԽ մինչև հաշվետվության հաստատումը Քարտուղարության հետ համատեղ կարող է կազմակերպել հարց ու պատասխան քննարկում:

Հաստատումից հետո հաշվետվությունը պետք է ներկայացվի բոլոր անդամներին երկու շաբաթվա ընթացքում:

Վեբ կայքը

Քարտուղարությունը պատասխանատու է Ցանցի պաշտոնական վեբ կայքի ստեղծման և սպասարկման համար:

Անդամների տվյալների բազա

Անդամների տվյալների բազան ստեղծվում և պահպանվում է Քարտուղարության կողմից:





Հավելված 2: ՄԱԿ-ի ԳՊ տասը սկզբունքները

Մարդու իրավունքներ

Սկզբունք 1. Գործարար հատվածը պետք է աջակցի և հարգի միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների պաշտպանությունը, և

Սկզբունք 2. պետք է զերծ լինի մարդու իրավունքների խախտումներից հանցակցությունից:

Աշխատանքային չափանիշներ

Սկզբունք 3. Գործարար հատվածը պետք է պաշտպանի միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ սակարկությունների իրավունքի արդյունավետ ճանաչումը,

Սկզբունք 4. պետք է աջակցի հարկադիր և ստիպողական աշխատանքի բոլոր ձևերի վերացմանը,

Սկզբունք 5. պետք է սատարի մանկական աշխատուժի արդյունավետ վերացմանը, և

Սկզբունք 6. պետք է աջակցի զբաղվածության և մասնագիտական խտրականության վերացմանը:

Բնապահպանություն

Սկզբունք 7. Գործարար հատվածը պետք է աջակցի շրջակա միջավայրի մարտահրավերների նկատմամբ զգուշավոր մոտեցմանը,

Սկզբունք 8. պիտի հանդես բերի նախաձեռնություններ՝ ուղղված շրջակա միջավայրի նկատմամբ առավել մեծ պատասխանատվության խթանմանը,

Սկզբունք 9. պիտի խրախուսի շրջակա միջավայրի համար անվնաս տեխնոլոգիաների մշակումը և տարածումը:

Կոռուպցիայի դեմ պայքար

Սկզբունք 10. Գործարար հատվածը պետք է աշխատի ընդդեմ կոռուպցիայի բոլոր ձևերի, ներառյալ՝ շորթումը և կաշառակերությունը:



Հավելված 3: Հապավումներ և տերմիններ

Օգտագործված հապավումներ

1. ՄԱԿ - Միավորված Ազգերի Կազմակերպություն
2. ՄԱԶԾ – Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագիր
3. ԳՊ – Գլոբալ Պայմանագիր
4. ՀԽ – Համակարգող Խորհուրդ

Օգտագործված տերմինների թարգմանությունը

1. Պատասխանատու անձ – Focal Point
2. Համակարգող խորհուրդ – Steering committee
3. Ընդհանուր ժողով – General meeting
4. “Առաջընթացի մասին հաղորդակցություն” հաշվետվություն–
Communication on Progress report
5. Գլոբալ Պայմանագիր – Global Compact
6. Քարտուղարություն - Secretariat